Էսաց.—Քիւ գեորզ տեսու տրիր իս, Նշան ի՞նչ կը։

Էսաց.—Ջաւահիր քեար գեոյ իրիսին. ինչ արիւ դպնը, լիւս կ'տայ, մարդ չըն քըշի վեար իմ տուան. ինչ յիրիկուն կ'կեայ, էսաց, մեղրէ մոմիր կ'վառին. էլի լիւս կ'տայ, չըն կ'ըխշի քշի։

Էսաց.—Տիւ խազա՞ր բարով էկար, էսաց, իս գիտիմ՝ քիւ խէր Դաւլթի տեղ կ'բռնիս։

Էսաց.—Վո՞ւմն ի քենէ բան կ'քաստայ։

Էսաց.—Կուղբադնի թոռնիրն ին, էսաց, չուրս թոռ ին, չուրսն էլ նման կ'տան գաղան։

Էսաց.—Իս էրթամ, էսաց, չուրսին էլ կ'բռնիմ, կ'բիրիմ. սպանի՞մ, թի[1]) քի խամար բիրիմ։

Էսաց.—Ցերկրուից[2]) մէկ էրա, եա սպանը, եա բիրը։

Մհերն էլ խլիսուն էլաւ, զիւր ձին խեծաւ, քշից, կինաց Լուսայ դեաշտ. Լուսայ դեաշտ տեսաւ Կուղբադնը էրկու միծ տղէն էկաւ. էնունց ճակ[3]) տիրկաւան ը, որ նիտ թալիցին, էկաւ կպաւ Քիւռիկ-Ջալալը ոտաց սըմին[4])· էլաւ զթիւր կէծակին զարկից, կէս կտրաւ, կէս մնաց ձիու վըտին։

Էլաւ, զերկու տղէն էլ բռնից, կապից, առից, իպի խրօխպոր կուշտ, Քիւռիկ-Ջալալին ըզոտ վիրուց. ոտ վիրուց,—էսաց.—Էդ ի՞նչ իլի քիւ ձիու ոտաց։

Աչկից, տեսաւ գեոյ նետը կտուր գեոյ մէջն ը. էլաւ, իպի աղկութ, զմրութ[5]) խալից, էլից էնու սըմի բրին[6]),—ժրաւ, էլաւ քեանց յառաջ աղէկ։

Էխան, իպի զԿուղբադնը էրկու տղէն, մին փնչից դռան էն եան, մէկ էն եան։

Էսաց.—Խրօխպէր, է՞լ կան, թի չ'կան։

Էսաց.—Էրկու տղայ էլ կայ, քեանց էս էրկուս շատ գաղան ին էրկուս. էսունք չոկ կնկնից ին, էրկուս չոկ. Մսրայ քեաղաք

---

[1]) Թէ։ [2]) Երկուսից։ [3]) Զէնք։ [4]) Սմբակ։ [5]) Թանգագին քարեր։ [6]) Վէրք։ [7]) Տեսակ։